ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ
ՁԵՐԲԱԿԱԼՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՊԱՀԵԼՈՒ ՎԱՅՐԵՐՈՒՄ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ
ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԴԻՏՈՐԴԱԿԱՆ ԽՈՒՄԲ

№ 2621/1577 07.09.2015թվ.

ՀՀ Ոստիկանության պետ,
գեներալ-լեյտենանտ
պարոն՝ Վ. Գասպարյանին

Հարգելի պարոն Գասպարյան,

Դիտորդական խումբը սույն թվականի սեպտեմբեր ամսին այցելություն էր կատարել ՀՀ ոստիկանության Սյունիքի ՄՎ Կապանի ՁՊՎ և արձանագրվել էին մի շարք թերություններ և խախտումներ:

Թերություններ՝

Դիտորդական խմբի 25.05.2015 թ-ի թիվ 2621/1544 գրությունում ներկայացրած թերությունների վերաբերյալ 03.07.2015թ-ի թիվ 2/2-1-2183 գրությամբ Ձեր կողմից մեկնաբանություն էր տրվել, որ Դիտորդական խմբի կողմից ներկայացրած թերությունները արդեն իսկ վերացվել են:

Փաստում ենք, որ ինչպես նախորդ այցելության ընթացքում, այնպես էլ այս այցելության ընթացքում արձանագրվել է.

1. Հերթապահ ոստիկանի սենյակում թափթփված վիճակում գտնվում էր կեղտոտ սպիտակեղենը:
2. Ընդհանուր բուժսենյակը գտնվում էր փոշոտ վիճակում:
3. Սանհանգույցը գտնվում էր հակահիգիենիկ, կեղտոտ վիճակում:
4. Սննդի տաքացման սենյակում ափսեները գտնվում էին կեղտոտ վիճակում:

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՀՏՍԲ
մուտք № 4147
08 09 2015 թ.

Նշված թերություններից բացի Դիտորդական խումբը արձանագրել էր, որ

1. Քննչական սենյակը գտնվում էր կեղտոտ վիճակում, սեղանին ինչ որ բաժակ և հյութ էր դրված, որը թափված էր ամբողջ սեղանի վրա:
2. Լոգարանում լցված էր չոր քլոր:

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ
մուտք № 5994
09 09 15

ՀՀ ք.Երևան 0009,Սարմենի 60 Հեռ./ֆաքս: (+374 10) 52 81 87
www.policemonitoring.org E-mail: info@policemonitoring.org

3. Բուժենյակում առկա բարձի երեսը գտնվում էր կեղտոտ վիճակում:

Խախտումներ՝

1. 14.08.2015թ-ին ժամը 15.15-ին փաստաբան Վահան Հովհաննիսյանը ահազանգել էր Դիտորդական խմբին և հայտնել էր, որ արդեն 15 րոպե է, ինչ լրացել է իր պաշտպանյալ Բաբկեն Ղևոնդի Ավետիսյանի արգելանքի տակ պահելու 72 ժամը և նրան ազատ չեն արձակում:

   Դիտորդական խումբը նույն րոպեին փորձել էր կապ հաստատել Սյունիքի ՄՎ հերթապահ մասի պետի հետ և պարզել, թե խնդիրը ինչում է կայանում, որ Բ. Ավետիսյանին ազատ չեն արձակում: Միայն մոտ 40 րոպե անց՝ 15.55-ի սահմաններում, հնարավոր եղավ հերթապահ մասի պետի հետ կապնվել, ով էլ մեկնաբանեց, որ հենց այս րոպեին տվյալ ձերբակալվածը դուրս է բերվել ՀՊՎ-ից և տեղափոխվում է ընդհանուր իրավասության դատարան:

Հերթական այցելության ընթացքում, Դիտորդական խումբը պարզեց, որ

- <<ՀՊՎ-ում պահվող անձանց հաշվառման>> գրանցամատյանում Բ. Ավետիսյանի արգելանքի վերցնելու 11.08.2015թ-ի ժամը 14.57 ժամը փոխված է և դարձված է 17.57:
- Կրկին անգամ նշենք, որ ահազանգը եղել էր 14.08.2015թ-ի ժամը 15.15-ին, բայց <<Ձերբակալվածներին խցերից դուրս բերելու>> գրանցամատյանում գրանցված է, որ ձերբակալվածը խցից դուրս է բերվել ժամը 14.50-ին:

Նշված իրավախախտման վերավերյալ Դիտորդական խումբը փորձեց պարզաբանում ստանալ հենց հերթապահ մասի պետից, ով էլ առանց կաշկանդվելու փորձեց ասել, և նշել, որ թե՛ Դիտորդների և թե՛ փաստաբանի ժամերը սխալ են եղել և ինչպես ահազանգի, այնպես էլ հետագա պարզաբանումների ժամերը իրականությանը չեն համապատասխանում:

Արդյունքում՝ խախտվել է Բ. Ավետիսյանի առավելագույն 72 ժամը, և ևս մեկ անգամ համոզվում ենք, որ ջնջումները համապատասխան գրանցամատյանում կատարվում են միտումնավոր՝ ըստ իրավիճակի պահանջի:

2. <<ՀՊՎ-ում պահվող անձանց հաշվառման>> գրանցամատյանի 117 համարի տակ գրանցված Դերենիկ Սողոմոնի Գրիգորյանի վերաբերյալ գրված չէ, թե ինչ հիմքով է ընդունվել ՀՊՎ, ում որոշման համաձայն և անհասկանալի է, թե տվյալ անձը ինչ կարգավիճակով է ընդունվել ՀՊՎ:

3. Դիտորդական խումբը արձանագրեց, որ <<ՀՊՎ-ում պահվող անձանց հաշվառման>> գրանցամատյանը լրացվում է հերթապահ մասի ոստիկանի կողմից: Խմբի այն հարցին, թե ի՞նչու է ինքը լրացնում, պարզաբանեց, եթե ինքը չէ, էլ ո՞վ: Այն դեպքում, երբ ՀՊՎ-ի հերթապահ ոստիկանը զբաղվածություն չուներ և գտնվում էր ազատ վիճակում:

Խնդրում ենք ուսումնասիրել ներկայացված փաստերը և տալ մեկնաբանություն:

Անհրաժեշտության դեպքում կարող ենք տրամադրել ներկայացված փաստերի հիմքերը:

Հարգանքով՝

ՀՀ ոստիկանության համակարգի ձերբակալված անձանց պահելու վայրերում վերահսկողություն իրականացնող հասարակական Դիտորդական խմբի նախագահ՝ Հ. Սահակյան

ՀՀ ք.Երևան 0009,Սարմենի 60 Հեռ./ֆաքս: (+374 10) 52 81 87
www.policemonitoring.org E-mail: info@policemonitoring.org

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՇՏԱԲ

375025, ք. Երևան, Նալբանդյան 130 հեռ. 59-65-94

N 2/2-1-3499 <<16>> 10 2015թ.

ՀՀ ոստիկանության համակարգի ձերբակալվածներին պահելու վայրերում հասարակական դիտորդների խմբի նախագահ Հասմիկ Սահակյանին

Հարգելի տիկին Սահակյան

Ձեր 07.09.2015թ. թիվ 2621/1577 գրությանը հայտնվում է, որ դիտորդների խմբի կողմից 2015թ. սեպտեմբեր ամսին ՀՀ ոստիկանության Սյունիքի մարզային վարչության Կապանի բաժնի ձերբակալվածներին պահելու վայր կատարած այցելության ընթացքում արձանագրված թերությունները և խախտումներն ուսումնասիրվել են ՀՀ ոստիկանության շտաբում, իսկ Սյունիքի մարզային վարչությունում կատարվել է ծառայողական քննություն, որի արդյունքներով տրվում են ներքոշարադրյալ մեկնաբանությունները:

Թերություններ.

1. 02.09.2015թ ժամը 19.00-ին կալանավորված անձինք ոստիկանության Կապանի բաժնի ՁՊՎ-ից տեղափոխվել են ՀՀ ԱՆ <<Գորիս>> ՔԿՀ: Նրանց կողմից ոգտագործված սպիտակեղենը ՁՊՎ ոստիկանի կողմից հավաքվել, ծալվել և դասավորվել է հանգստի սենյակում լվացքատուն տանելու նպատակով և դրանք թափթփված չեն եղել:
2-րդ, 3-րդ, 5-րդ, 6-րդ և 7-րդ կետերով նշված թերություններն արդեն իսկ վերացվել են:
4. Դիտորդների խմբի այցելության պահին սննդի համար նախատեսված ափսեները գտնվել են մաքուր վիճակում:

Խախտումներ.

1. Բ. Ավետիսյանը 11.08.2015թ. ժամը 14.53-ին քննիչի որոշմամբ ձերբակալվել և ժամը 14.57-ին ընդունվել է ոստիկանության Կապանի բաժնի ՁՊՎ: <<ՁՊՎ-ում պահվող անձանց հաշվառման>> գրանցամատյանում Բ. Ավետիսյանի ՁՊՎ ընդունման ժամը 14.57-ի փոխարեն սխալմամբ գրառվել է 17.57, որը ուղղվել և նշվել է ճիշտ ժամը՝ 14.57: 14.08.2015թ ժամը 14.50-ին. Բ. Ավետիսյանը դուրս է բերվել ՁՊՎ-ից և տեղափոխվել Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի Կապանի նստավայր, որտեղ դատարանի կողմից բավարարվել է Բ. Ավետիսյանին կալանքի տակ վերցնելու միջնորդությունը և նույն օրը վեջինս կալանքի որոշումով ետ է վերադարձվել ու ընդունվել ոստիկանության Կապանի բաժնի ՁՊՎ: Բ. Ավետիսյանի փաստաբանի ահազանգի վերաբերյալ այն մասին, որ իր պաշտպանյալի արգելանքի տակ պահելու առավելագույն 72 ժամը լրացել է, սակայն նա ազատ չի արձակվել տրվում է հետևյալ պարզաբանումը.

Ձերբակալված Բ. Ավետիսյանը ձերբակալման առավելագույն 72 ժամից ավել չի պահվել ՁՊՎ-ում: 14.08.2015թ ժ.15.15-ին երբ փաստաբան Վ. Հովհաննիսյանը ահազանգել է դիտորդների խմբին, այդ ժամանակ Բ. Ավետիսյանը գտնվել է Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանում, որտեղ քննվել է նրա խափանման միջոցի հարցը: Այդ հանգամանքը հիմնավորվել է <<Ձերբակալվածներին խցերից դուրս բերելու>> գրանցամատյանում արված համապատասխան գրառումով: Ծառայողական քննության ընթացքում իր տված բացատրությամբ նշված փաստը հաստատել է նաև կալանավոր Բ. Ավետիսյանը՝ հավելելով որ ինքն որևէ բողոք չունի: Ոստիկանության ծառայողների կողմից Բ. Ավետիսյանի իրավունքները չեն խախտվել:

2. Դ.Գրիգորյանը ոստիկանության Կապանի բաժնի ՁՊՎ է ընդունվել ձերբակալման արձանագրության հիման վրա, սակայն ՁՊՎ վարչակազմի կողմից ձերբակալվածի վերաբերյալ <<ՁՊՎ-ում պահվող անձանց հաշվառման>> գրանցամատյանի սյունակներում գրառումները կատարվել են թերի, որոնք հետագայում ուղղվել են:

3. ՀՀ ոստիկանության պետի 20.06.2014թ. թիվ 2121-Ա հրամանի համաձայն հերթափոխի ավագի օգնականը հերթափոխի ընթացքում կարող է կատարել նաև ՁՊՎ ոստիկանի գործառութային պարտականությունները: Հարկ է նշել, որ համաձայն ՀՀ ոստիկանության պետի 2005 թ. հունվարի 14-ի թիվ 1-Ն հրամանի նշված խնդիրը դուրս է դիտորդական խմբի իրավասությունից:

Ծառայողական քննության արդյունքներով իրենց գործառութային պարտականությունների մեջ թերացած ոստիկանության Կապանի բաժնի հերթահ մասի մի խումբ ծառայողներ ենթարկվել են կարգապահական տույժի:

ՀՀ ոստիկանության շտաբ